

Բանալի բառեր՝ ՓՄՁ, մրցակցություն, գիտատեխնիկական առաջընթաց, նորարարություններ, Էկոլոգիա, ռեսուրսների կրնտլիդացիա, տնտեսական անվտանգություն, արհեստների պահպանում:

ՀՏԴ 658.1:338

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
**Փոքր և միջին ձեռնարկությունների կառավարման
հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները 33-ում**

Մանե ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Գիտական ղեկավար՝
Դավիթ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկատիրությունը առանցքային նշանակություն ունեցող տնտեսական երևույթ է, առանց որի անհնար է պատկերացնել դրա գոյությունն ու գործունակությունը: Ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության հիմքն է, որն ապահովելով կյուրակալ և ոչ կյուրակալ բարիքների արտադրությունը՝ լուծում է նաև ավելի խորը խնդիրներ՝ ապահովելով նոր աշխատատեղեր պետական բյուջեի եկամուտներ և սահմանափակ ռեսուրսների առավել արդյունավետ շահագործում¹: Ձեռնարկատիրությունը հանդես է գալիս որպես հասարակական կյանքի բոլոր բաղադրիչները՝ գիտությունը, կրթությունը, արտադրությունը, սպառումն ու սոցիալական ապահովությունը կապակցող օղակ: Ձեռնարկատիրությունը նաև շուկայական մտածողության հիմքն է, ապրելակերպ և աշխարհայացք, որը մարդկանց դրդում է դեպի տնտեսական և ստեղծարար գործունեություն:

Ձեռնարկատիրության դերակատարումն ու կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն արտադրության մյուս գործոնների՝ հողի, աշխատանքի և կապիտալի միացնող ուժն է, առանց որի դրանցից ոչ մեկը չի ապահովում սպառողական արժեք կամ ապահովում է իր պոտենցիալի միայն մի մասը: Ձեռնարկատերը, միավորելով արտադրության գործոնները, ապահովում է սիներգետիկ էֆեկտ, ինչը նշանակում է, որ դրանց համակցումից ստացվող արդյունքն ավելի մեծ է, քան դրանցից յուրաքանչյուրի ապահոված արժեքի հանրագումարը: Այս տեսանկյունից դիտարկելիս ձեռնարկատիրոջ ստացած շահույթը ձևավորում է ոչ թե արտադրության առանձին գործոնների շահագործումից ստացված արդյունքի մի մասի տարանջատումից և յուրացումից, այլ հենց սիներգետիկ էֆեկտից: Այսինքն ձեռնարկատիրությունը և ձեռնարկատիրական շահույթը ինքնին բեռն չեն հանդիսանում հասարակության համար, ի հեճուկս այն մոտեցման, որ ձեռնարկատերը հանդես է գալիս որպես շահագործող դասակարգ:

Ձեռնարկատիրության զարգացումը ձևավորում և պայմանավորում է բազմաթիվ փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) առաջացումը: Այս իրողությունը շուկայական տնտեսության բնական ատրիբուտներից է, սակայն երևույթի նկատմամբ վերաբերմունքի առումով առկա է կարծիքների որոշակի տարբերություն: Առաջին տեսանկյունից դիտարկելիս ՓՄՁ սուբյեկտները դիտվում են որպես շուկայական տնտեսության հենք, որպես դրա գործունեության անխափանության ապահովման կարևորագույն ենթակառուցվածք: Մյուս տեսանկյունից դրանք դիտվում են որպես խոշոր ձեռնարկատիրության սպասարկող կազմակերպություններ, որոնց կարևորությունը պետք է զերգանահատել, քանի որ լուրջ գիտատեխնիկական առաջընթացը և միջազգային շուկայում մրցունակությունը կարելի է ապահովել միայն հսկայածավալ ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների ներդրման պարագայում, որոնք հասու են միայն խոշոր կազմակերպություններին: Հետևաբար խոշոր կազմակերպությունների դերի թերազնահատումը երկարաժամկետ ժամանակահատվածում կհանգեցնի երկրի տնտեսական ներուժի լճացման, մրցունակության անկման և դիրքերի զիջման:

Փոքր ձեռնարկությունները, ձևավորելով և գոյություն ունենալով սկզբունքորեն բոլոր երկրներում և տարբեր սոցիալ-տնտեսական պայմաններում, ցույց են տվել իրենց կենսունակությունն ու արդյունավետությունը՝ արտաքին միջավայրի փոփոխություններին արագ արձագանքելու, հասարակությունում տեղի ունեցող գործընթացներին ադապտացվելու և անգամ օրենքից դուրս կարգավիճակում գոյություն ունենալու և զարգանալու տեսանկյունից, ինչպես տեղի էր ունենում ԽՍՀՄ տարիներին:

Որպես տնտեսությունում ՓՄՁ դերի կարևորագույն գործառնություն առավել հաճախ առանձնացվում է տնտեսական մրցակցությունը նպաստելու գործառնությունը²: Սակայն ՓՄՁ թողած ազդեցությունը չի սահմանափակվում մրցակցության պաշտպանության ոլորտում: ՓՄՁ ազդեցության ոլորտները ներկայացված են գծապատկերում:

ՓՄՁ սուբյեկտները կարևորագույն դերակատարում ունեն գիտատեխնիկական առաջընթացի և առաջադեմ տեխնոլոգիաների յուրացման գործընթացում: Ներկայիս իրողությունների պայմաններում այս գործառնությունից իրականացումը նկատելի է տեղեկատվական, բարձր տեխնոլոգիաների և մի շարք այլ ուղղություններում, որտեղ ստեղծվող հավելյալ արժեքը տնտեսության միջին մեծության համեմատությամբ շատ ավելի բարձր է: Դա է պատճառը, որ ՓՄՁ ոլորտի զարգացմանը մեծ նշանակություն է տրվում ողջ աշխարհում:

Առանց ՓՄՁ կայացած համակարգի շուկայական տնտեսության ենթակառուցվածքների բարեփոխումները հաճախ սպասված արդյունքը չեն տալիս՝ կասկածի տակ դնելով այդ ուղղությամբ ծախսված պետական միջոցների, արտասահմանյան դոնոր կազմակերպությունների տրամադրած դրամաշնորհային և վարկային միջոցների ծախսման արդյունավետության և նպատակահարմարության հարցը: Այս առումով տարբեր հեղինակներ գտնում են, որ 90-ական թթ-երին նախկին ԽՍՀՄ


¹ Андреев С. А., Региональная система поддержки малого предпринимательства - СПб., Изд. СПбГУЭФ, 2004, с. 171

² Андреев С. А., Региональная система поддержки малого предпринимательства - СПб., Изд. СПбГУЭФ, 2004, с. 171

հանրապետություններում տնտեսական և քաղաքական վերափոխումների կարևորագույն խոչընդոտը հենց ձեռնարկատիրության և մասնավորապես ՓՄՁ ոլորտի գործունեության մեխանիզմների բացակայությունն էր³:

Դա բացատրվում է այն հանգամանքով, որ զարգացած ՓՄՁ ոլորտը թույլ է տալիս լրացնել պետական կառավարման համակարգում առկա բացերը, ցույց տալ պետական բարեփոխումների առավել հրատապ ուղղությունները, արգելակել տարբեր ոլորտներում մենաշնորհների ձևավորման գործընթացն ու դրանցից պետության կախվածությունը, դիվերսիֆիկացնել պետական և տեղական բյուջեների եկամուտների աղբյուրները, ինչպես նաև թուլացնել սոցիալական լարվածությունը՝ մեղմելով սոցիալապես խոցելի խմբերին պետական աջակցության մեխանիզմների թերությունները: Նաև դրանով է պայմանավորված ՓՄՁ ոլորտի զարգացման կարևորումը ինչպես պետական, այնպես էլ միջազգային կառույցների կողմից⁴:

ՓՄՁ ազդեցության ոլորտները



ՓՄՁ ձեռնարկությունների հաղթաթղթերի շարքում է նաև տեղական շուկաներին մոտիկ լինելը, հաճախորդների առանձնահատուկ պահանջները բավարարելու, փոքր խմբաբանակներով արտադրելու ունակությունը, կառավարման ավելորդ մակարդակների և օղակների բացակայությունը, ինչը հնարավորություն է տալիս անհատականացնել արտադրությունը՝ խոշոր կազմակերպությունների համեմատությամբ շատ ավելի ցածր ռեսուրսածախսի պայմաններում: Նման պայմաններում տնտեսության վերակառուցումն ու զարգացումը հանգեցնում է տեղական նշանակության հումքային ռեսուրսների ավելի բարձր արդյունավետությամբ օգտագործմանը և արտահանման ներուժի ընդլայնմանը⁵:

ՓՄՁ սուբյեկտները լրացուցիչ հնարավորություններ են ստեղծում աշխատուժի համար: Ընդ որում՝ ոչ միայն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների, այլև շարքային աշխատողների համար, որոնք ոչ կորպորատիվ միջավայրում աշխատելու հնարավորություն են ստանում: Կորպորատիվ աշխատանքային միջավայրը հաճախ ընկալվում է որպես պակաս ստեղծագործական և ինքնարտահայտման ավելի փոքր հնարավորություններ տվող, որտեղ գործընթացները պետք է իրականացվեն հստակ ամրագրված կանոնների և ցուցումների շրջանակներում: Դրան հակառակ՝ ՓՄՁ սուբյեկտներում ինքնարտահայտման հնարավորությունները հաճախ ավելի բարձր են գնահատվում:

ՓՄՁ սուբյեկտները կարևոր դերակատարում են խաղում պետության հակամենաշնորհային քաղաքականության իրականացման գործընթացում: Կարելի է մեծ վստահությամբ պնդել, որ առանց ՓՄՁ սուբյեկտների գոյության և արդյունավետ գործունեության պետական հակամենաշնորհային քաղաքականությունը դատապարտված է ձախողման: Փոքր և միջին ձեռնարկությունների միջոցով արագ և արդյունավետ կարող են լուծվել այնպիսի մակրոխնդիրներ, որոնք անհնար է պատկերացնել խոշոր կազմակերպությունների դեպքում՝ պայմանավորված դրանց կառավարման համակարգի ահռելի չափսերի, իներտության և տրանսակցիոն ծախսերի առկայությամբ: Պատահական չէ, որ ՓՄՁ սուբյեկտների զարգացման հարցերին լուրջ ուշադրություն են հատկացվում ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում: Հատկապես վերջիններում է ՓՄՁ ոլորտը առավել ամբողջական և արդյունավետ լուծում վերը նշված խնդիրները:

Ձեռնարկությունների մրցունակությունն ու արդյունավետ գործունեությունը երկարաժամկետ ժամանակահատվածում անհնար է պատկերացնել առանց նորարարությունների ակտիվ իրականացման՝ ուղղված ինչպես արտադրական գործընթացների կատարելագործմանը, այնպես էլ նոր արտադրանքի մշակմանը, սպառողների կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան թողարկվող արտադրանքի կատարելագործման գործընթացներին: ՓՄՁ սուբյեկտները մեծ դեր են խաղում նորարարությունների մշակման և ներդրման գործընթացում, ընդ որում խոսքը վերաբերում է ոչ միայն ապրանքային, այլև տեխնոլոգիական և կառավարչական նորամուծություններին: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ զարգացած երկրներում փոքր ձեռնարկությունները կրկնակի թվով ավելի շատ նորամուծություններ են կյանքի կոչում, քան իրենց խոշոր

³ Аганбегян А. Г., Россия на пути к равновесной рыночной экономике, ЭКО, 1999, N 6, с. 22-34.
⁴ Кокрен К., Малые предприятия и стратегия, Lean, Европейское качество, 2004, N 2, с. 40-47.
⁵ Андреев С. А., Региональная система поддержки малого предпринимательства - СПб., Изд. СПбГУЭФ, 2004, с. 171

գործընկերները⁶: Մի շարք գիտատար ճյուղերում ՓՄՁ սուբյեկտները ավելի դինամիկ, առաջադեմ և նախաձեռնող են գտնվում և ավելի արագ են արձագանքում շուկայից ստացվող ազդակներին: ՓՄՁ-ները հատկապես արդյունավետ են գործում մտավոր սեփականության օբյեկտների արտադրության գործում:

ՓՄՁ սուբյեկտների գործունեությունը հաճախ բնութագրվում է նեղ մասնագիտացմամբ, ինչը թույլ է տալիս համեմատաբար փոքր ներդրումներով ձեռք բերել նեղ մասնագիտացված մեքենասարքավորում և հաջողությամբ մրցակցել արդյունավետությամբ խոշոր կազմակերպությունների հետ, որոնք ավելի շատ մասնագիտանում են մասսայական արտադրության վրա: Նեղ մասնագիտացմամբ արտադրանքի թողարկումը թույլ է տալիս ավելի ամբողջական բավարարել սպառողների պահանջարկը, այսինքն ՓՄՁ արտադրանքը ավելի մեծ սպառողական արժեք է ներկայացնում:

Խոշոր կազմակերպությունների ակնառու թերություններից մեկը «խոշոր բիզնեսի համախտանիշն» է, ինչը արտահայտվում է կազմակերպության խոշորացմանը զուգահեռ կառավարման համակարգի բարդացման հետ: Արդյունքում զգալիորեն նվազում է ձեռնարկության արտաքին միջավայրի հետ ուղիղ և հետադարձ կապի արդյունավետությունը, բանի որ կազմակերպության տեղեկատվական ապահովումը իրականացվում է առանձնացված ստորաբաժանման միջոցով, այսինքն միջնորդավորված, իսկ ստացված տեղեկատվությունը կազմակերպության վերջնական հասցեատերերին է հասնում նշված ստորաբաժանման աշխատակիցների կողմից մշակվելուց հետո: Այդ պատճառով սպառողների պահանջների կազմակերպության արձագանքը ոչ միայն հապաղում է, այլև շատ դեպքերում լինում է խեղաթյուրված: Այս խնդիրը լուծելու համար տարածված է խոշոր կազմակերպությունների կողմից ՓՄՁ սուբյեկտների հիմնումը և առանձին ոլորտում գործունեության կազմակերպման պատվիրակումը, ինչը թույլ է տալիս մասամբ հաղթահարել խոշոր կազմակերպությունների նշված թերությունը:

Փոքր խմբաբանակներով արտադրանք թողարկելու շուկայական ռազմավարությունը ՓՄՁ-երին թույլ է տալիս ոչ միայն հաճախակի փոփոխել արտադրվող ապրանքատեսակակին, այլև օգտագործել հումքի և նյութերի համեմատաբար փոքր աղբյուրները, որոնց շահագործումը խոշոր ձեռնարկությունների պարագայում կդառնա տնտեսապես ոչ հիմնավոր: Հաճախ ՓՄՁ սուբյեկտները զբաղվում են նաև խոշոր կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի կատարելագործմամբ և առանձին սպառողի պահանջներին հարմարեցմամբ, ինչը խոշոր կազմակերպությունները ոչ միշտ են պատրաստակամ անել՝ կապված ինչպես նյութատեխնիկական, այնպես էլ աշխատանքային ռեսուրսների անբավարարության հետ: Քիչ չեն նաև դեպքերը, երբ ՓՄՁ սուբյեկտները ուտիլիզացնում են կամ օգտագործում են խոշոր կազմակերպությունների թափոնները կամ կողմնակի արտադրանքը: Դրանք կարող են լինել ինչպես արտադրական, այնպես էլ տեխնոլոգիական բնույթի, ինչպիսին է, օրինակ գոլորշին: Տարածված է նաև ՓՄՁ-երի կողմից խոշոր կազմակերպությունների համար կիսաֆաբրիկատների, համալրող արտադրանքի թողարկումը:

Հիմնադիրների համար ՓՄՁ ձեռնարկությունները նույնպես առանձնահատուկ նշանակություն ունեն: Նոր ձեռնարկություն հիմնելը հաճախ պայմանավորվում է մարդու ինքնարտահայտման, արտադրության կազմակերպման և կառավարման վերաբերյալ սեփական հայացքների և պատկերացումների կենսագործման և բարոյափոխության անհրաժեշտությունը, ինչպիսիք են կյանքը արմատապես փոխելը, անհետաքրքիր և անհեռանկարային նախկին աշխատանքին հրաժեշտ տալը, տնտեսական անկայության ձեռք բերումը, այսինքն ՓՄՁ հիմնումը հաճախ թույլ է տալիս հաղթահարել մարդու ներքին ընկճախոսը: Սեփական կազմակերպության հիմնումը դիտվում է որպես սեփական նախասիրությունների և աշխարհայացքի համապատասխանող աշխատանքային կոլեկտիվ ձևավորելու ուղի, որտեղ պայմաններ կստեղծվեն ստեղծագործ և փոխօգնության վրա հիմնված աշխատանք իրականացնելու համար⁷:

ՓՄՁ-երը զգալի ներդրում ունեն նաև տնտեսությունում առկա ազատ ֆինանսական և ոչ ֆինանսական ռեսուրսների, այդ թվում նաև աշխատանքային և նյութական ռեսուրսների օգտագործման մակարդակի բարձրացման գործում: Եթե ֆինանսական ռեսուրսների պարագայում բանկային համակարգը ինչ-որ չափով լուծում է դրանց հավաքագրման և տնտեսության մեջ կիրառության մեջ դնելու խնդիրը, ապա հումքային և աշխատանքային ռեսուրսների դեպքում դա ոչ միշտ է հնարավոր: Ավելին, ֆինանսական ռեսուրսների պարագայում այն երկրների բնակչությունը, որտեղ արձանագրվել են հիպերինֆլյացիայի, ֆինանսական համակարգի փլուզման, բանկերի սնանկացման երևույթներ, բնակչությունը ոչ միշտ է վստահում բանկային համակարգին: Նման երկրների շարքում է նաև Հայաստանը: Ավելին, վերջին տարիներին բանկային ավանդների տոկոսադրույթների շարունակական անկումը նվազեցնում է նաև խնայողությունները բանկային համակարգում ավանդադրելու խթանները, ինչը նույնպես խնայողությունների այդ հատվածը դուրս է բերում տնտեսական շրջապտույտից: Ինչ վերաբերում է աշխատանքային ռեսուրսներին, ապա աշխատավարձի ցածր մակարդակի պայմաններում ոչ միշտ են աշխատելու խթանները բավարար գտնվում մարդկանց դեպի վարձու աշխատանքը կողմնորոշվելու համար: Շատերը նախընտրում են զբաղվել տնայնագործությամբ, կենցաղային ծառայությունների մատուցմամբ, արտազևա աշխատանքի մեկնելով, ինչը աշխատուժի այս հատվածին դուրս է բերում տնտեսական շրջապտույտից՝ հանձնեցնելով ՀՆԱ-ի հավելվածի կրճատմանը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բնույթի բազմաթիվ խնդիրների:

ՓՄՁ ձեռնարկատիրությունը անվիճելի նշանակություն ունի ձեռագործ աշխատանքի և ազգային բնույթի արտադրանքի թողարկման գործում: Այսինքն ձեռնարկատիրության այս տեսակը կարևոր նշանակություն ունի ազգային ավանդույթների պահպանման գործում, բանի որ շուկայական տնտեսության պայմաններում առանց համապատասխան ֆինանսական հիմքի գործունեության այս տարատեսակները դատապարտված են անհետանալու: Այս կազմակերպությունները ունակ են ապահովել նաև գեղարվեստական բարձր արժեք ներկայացնող արտադրանք, ինչը աշխատուժի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի, բանի որ ավելի բարձր սպառողական արժեք է ներկայացնում: ՓՄՁ սուբյեկտներում ձևավորվում են նաև մասնագիտական բարձր ունակություններ ունեցող արհեստավարժ մասնագետներ, ովքեր ունակ են լուծելու բազմաբովանդակ խնդիրներ՝ ի տարբերություն հոսքագծերի վրա աշխատող և միատարր աշխատանք կատարող աշխատողների:

ՓՄՁ ձեռնարկատիրությունը զբաղվածության ապահովման և գործազրկության կրճատման մեծ հնարավորություններ է ընձեռում: 20-րդ դարից սկիզբ առած տնտեսական վերափոխումները իրենց շարունակությունն են ստանում 21-րդ դարում, որի Երևոյնը զբաղվածության առումով կայանում է նրանում, որ բազմաթիվ մասնագիտությունների պահանջարկը նվազում է, առաջանում են նոր մասնագիտություններ: ՓՄՁ ոլորտը աշխատանքը կորցրած և վերապատրաստման կարիք ունեցող անձանց համար արդյունավետ հարթակ է և կարող է նպաստել նրանց վերապատրաստման և մասնագիտական ունակությունների զարգացմանը: Բացի այդ՝ աշխատանքը կորցրած բարձր որակավորմամբ մասնագետները, ներգրավվելով ՓՄՁ սուբյեկտներում աշխատանքային հարաբերությունների մեջ, հնարավորություն են ստանում իրենց ունակությունները և մասնագիտական գիտելիքները ներդնել նոր ոլորտում՝ նպաստելով որակական առաջընթացի: Անխոս ՓՄՁ ոլորտը ցանկացած պետության համար միջին խավի ձևավորման ելակետն է, որը հենարան կարող է հանդիսանալ ինչպես պետության սոցիալ տնտեսական բաղաբանականության այնպես էլ բաղաբանական իշխանության համար:

⁶ Шахмалов Ф. Малое предпринимательство. Ж. «Экономист», №14, 1994. с.69

⁷ Соболев В.Ю. Мелкий и средний бизнес. Малый и средний бизнес в системе предпринимательства: Межвуз. сборник, Н.Новгород, ННГУ, 1995, с.8

ՓՄՁ ձեռնարկատիրությունը կարևոր նշանակություն ունի նաև պետական բյուջեի եկամուտների ապահովման գործընթացում: Չնայած պետական բյուջեի եկամուտների ապահովման գործում խոշոր ձեռնարկությունների վճարած հարկերի կարևորությունը վիճարկման ենթակա չէ, այնուամենայնիվ, ՓՄՁ ձեռնարկատիրությունը նվազեցնում է պետական տարբեր մակարդակների բյուջեների կախվածությունն առանձին խոշոր հարկատուների վճարած հարկերից: Խնդիրը հատկապես սուր է դրվում ֆեդերատիվ կառուցվածքով երկրներում, որտեղ առանձին տարածքային միավորի բյուջետային եկամուտների առյուծի բաժինը կարող է ձևավորվել մի քանի խոշոր, մասնավորապես հանքարդյունաբերական ձեռնարկությունների վճարած հարկերից: Նման սցենարում նահանգային իշխանությունները ֆինանսական կախվածության մեջ են հայտնվում մասնավոր տնտեսվարողներից՝ հաճախ տրվելով նաև նրանց քմահաճույքներին: Այս դեպքում, ՓՄՁ ձեռնարկատիրությունը, ապահովելով բյուջետային եկամուտների ապակենտրոնացում, նպաստում է նաև պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը:

*Ներկայացվել է 06.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.*